«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ:

ԵՆԹԱԹԵՄԱ՝ ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Է ԱԶԳԱՅԻՆ ԷՊՈՍԸ ԾՆԵԼ ՀԵՐՈՍՆԵՐ:

ԱՌԱՐԿԱՆ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՑԵԴՐԻԿԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն……..3

ԳԼՈՒԽ 1

1. 1. «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» էպոսի դասավանդումը դպրոցում որպես արժեհամակարգի ձևավորման միջոց……..5

1. 2.Սասնա ծռեր էպոսի գրական մշակումները……6

1. 3.«Սասունցի Դավիթ» էպոսը որպես հայի ազգային ինքնության արտացոլման աղբյուր -7

ԳԼՈՒԽ 2

2.1.. <<Սասունցի Դավիթ>> էպոսի ուսումնասիրման ընդգրկվածությունը հանրակրթական դպրոցի 1-9-րդ դասարանների դասագրքերում.....12

2.2. Հետզոտական աշխատանք……..14

Եզրակացություն.....20

Օգտագործված գրականության ցանկ……21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար անչափ կարևոր է ազգային մտածողություն և հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից է սովորողների մեջ ազգային, բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումը ու զարգացումը: Այն արժեքների, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Այս գործում մեծ դերակատարություն ունի ժողովրդական բանահյուսությունը, որը կարող է երիտասարդ սերնդի ազգային ինքնության և բարոյական դաստիարակության գործընթացը դարձնել առավել արդյունավետ: Ժողովրդական բանահյուսության մեջ արտացոլված են մեր ժողովրդի աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարները, երազանքները: Այստեղ արտացոլված է մեր ազգի անդրդվելի կամքը, զորությունն ու հնարավորությունները՝ ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Էպոսը (դյուցազներգություն) ժողովրդական բանահյուսության տեսակ է: Դա մի ուղի է, որը մեզ տանում է դեպի ինքնաճանաչում, այսինքն՝ էպոսը բացահայտում է մեր ինքնությունը: Էպոսում խտացված են մեր ժողովրդի արժեքները, պատկերացումները առաքինության, ազնվության, լավի ու վատի, արդարադատության, անկեղծության ու հավատարմության մասին: Այստեղ ամփոփված են ժողովրդի ձգտումը դեպի ազատությունը, պայքարը արդարության համար: Անհեղինակ, ժողովրդական ստեղծագործություններում՝ առասպելներում, էպոսում, հեքիաթներում և ավանդազրույցներում, ինքնաբուխ ձևով դրսևորվում են տվյալ ազգի ինքնության, աշխարհատեսության, հոգեկերտվածքի և վարքագծի գծերը, երկարատև հարմարումների հետևանքով ձևավորված արժեքային մոտեցումներն ու դիրքորոշումները: Քանի որ առասպելները, էպիկական պատումները, լեգենդներն ու ավանդազրույցները գալիս են դարերի խորքերից ու իրենց վրա կրում են այդ դարերի կենսակերպի ու մտածելակերպի հետքերը, դրանք լավագույնս արտացոլում են Աստծո, բնության, հասարակության, մարդու, կյանքի, ազգի, հայրենիքի, պետության և այլ արժեքների ու երևույթների վերաբերյալ տվյալ ժողովրդի պատկերացումները: Այլ խոսքով՝ էպիկական կերպարների, հատկապես հերոս-դյուցազունների սխրագործությունների, վարք ու բարքի վերլուծությունն անսպառ նյութ կարող է տալ ոչ միայն նրանց, այլև տվյալ ազգի մտածելակերպն ու գործելակերպը,

բարոյահոգեբանական յուրահատկությունները որոշ իմաստով հասկանալու ու գնահատելու համար։

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է ազգային դաստիարակության նոր, բազմազան ուղիների ու միջոցների մշակման անհրաժեշտությամբ, որը պետք է իրականացվի հայկական ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավթի» ուսումնասիրման գործընթացում հայ երեխայի ազգային ինքնության ընկալման ու ձևավորման միջոցով։

Հետազոտության նպատակն է «Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրմանը զուգահեռ մշակել և փորձարկել բնագրային մի շարք տարրերի /ազգագրական, քրիստոնեական և լեզվական/ ուսուցման այնպիսի մեթոդներ ու միջոցներ, որոնք կնպաստեն դպրոցականների ազգային ինքնության ընկալմանն ու ձևավորմանը։

Նշված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- բնութագրել արժեհամակարգը։
- ուսումնասիրել հայրենասիրական դաստիարակության առանձնահատկությունները
- ներկայացնել էպոսը՝ որպես դաստիարակության միջոց
- ի հայտ բերել այն հմտությունները, որոնք սովորողները ձեռք են բերում՝ էպոսն ընթերցելով
- ուսումնասիրել «Սասունցի Դավիթ» էպոսի ընդգրկվածությունը գրականության դասագրքերում.
- ուսումնասիրել «Սասունցի Դավիթ» էպոսում արտացոլված ազգագրական և քրիստոնեական տարրերի ուսումնասիրման հնարավորությունները գրականության դասագործընթացում.

Հետազոտական աշխատանքի նորույթը «Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրման գործընթացին զուգահեռ դպրոցականների ազգային հոգեկերտվածքի ձևավորմանն ու դաստիարակությանը նպաստող փոխներգործուն մեթոդների կիրառումն է։

ԳԼՈՒԽ 1

1.1.«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Ամեն ժողովրդի էպոս ամենակարևորն է ստեղծող ժողովրդի բանահյուսության գանձարանում: Այդպիսին է նաև հայկական ժողովրդական հերոսական էպոս «Սասունցի Դավիթը», որին ծանոթանում են տարբեր դասարաններում: Որպես երկար տարիներ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն դասավանդած ուսուցչուհի՝ հավաստում եմ, որ հայ երեխան սիրով է յուրացնում մեր էպոսի խորունկ գաղափարներն ու հայրենասիրական ոգին: Ամեն ինչ կախված է դասավանդող ուսուցչի վարպետությունից: Էպոսի ուսուցումը սկսվում է ցածր դասարաններից, և դա տրամաբանական է:Մեծ մտածող, մանկավարժ և գրող Լևոն Շանթը, որը երկար տարիներ զբաղվել է մանկավարժական աշխատանքով, ապագա և գործող ուսուցիչներին հղել է բազմաթիվ օգտակար պատգամներ: Ահա թե ինչ է ասում նա «Հաջորդականության ընտրությունը» հոդվածում. «Ո՛չ մեկ կարողություն, ոչ մեկ ուսում ու գիտություն ձեռք չի բերվիր մեկ անգամեն, մեկ ջանքով, այլ երկար-երկար ճիգերով, քիչ-քիչ, հետզհետե և կտոր-կտոր, և երբեք ո՛չ մեկ կարողություն, ո՛չ մեկ գիտություն վերջ ու գագաթ չունի իր զարգացման. միշտ կարելի է ավելի ու ավելի կատարելագործել. ինչ որ սովորաբար ավարտել, գագաթնակետ կամ կատարելություն կնկատենք՝ հարաբերական արտահայտություններ են միայն»: Էպոսը ամեն հայի պետք է ուղեկցի նրա կյանքի բոլոր տարիքներում, որովհետև էպոսի ասելիքը ամեն մի ժողովրդի հավաքական մտածողության դարավոր կենսափորձի հիման վրա է առաջացել և ասվել է դարերի համար. այն ուղեցույց: Այս ճշմարտությունը գիտակցել է հենց էպոսի առաջին գրառողը՝ Գարեգին Սրվանձտյանցը, որի կատարածը հիմք դարձավ հայ էպոսագիտության զարգացման և նրա մշակումներին համար Զարմանալի չէ, որ Գ. Սրվանձտյանցի գրառումից շատ չանցած՝ հայ գրականության մեջ այդ գրառման հիման վրա հանդես եկան էպոսի երկու գրական մշակումներ: Առաջինն այն իրականացրեց Սեդրակ Մանդինյանը (1844-1915), որը մանկավարժ էր, դերասան, գրական ու թատերական գործիչ: Նա երկար տարիներ հայ գրականություն է դասավանդել դպրոցներում և միանգամից կարևորել է էպոսի՝ ազգային ոգին արթուն պահելու հատկանիշը ու իրականացրել նրա մշակումը՝ «Ազգային դյուցազնական աշխարհ» խորագրով:

1.2. «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ

«Սասնա ծռերը» հայ ազգային էպոսն է, ստեղծվել է միջնադարում՝ արաբական արշավանքների ժամանակ: «Սասնա ծռերը» հայտնաբերել և ամբողջությամբ գրառել է

Գարեգին Սրվանձտյանը 1873 թվականին, Մշո Առնիստ գյուղում, երեսփոխան Կրպոյից և հրատարակել Կոստանդնուպոլսում «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» գրքույկով: Երկրորդ տարբերակը 1886-ին Էջմիածնում գրի է առել Մանուկ Աբեղյանը՝ Նախո քեռի Մոկացուց և հրատարակել Շուշիում«Դավիթ և Միհր»: Նորանոր տարբերակներ են գրառել Գ.Հովսեփյանը, Խ.Դաղյանը, Ս.Հայկունին, Ա.Աբեղյանը, Ե. Լալայանը, Կ.Մելիք–Օհանջանյանը, Ա.Ղանալանյանը և ուրիշներ: 1938-1939 թթ. «Սասնա ծռերի» 1000-ամյա հոբելյանի առթիվ մինչ այդ գրառված 60-ից ավելի պատումների հիման վրա, Մ.Աբեղյանի, Գ.Աբովի, Ա.Ղանալանյանի խմբագրությամբ հյուսվել-կազմվել է մեկ միասնական համահավաք բնագիր «Սասունցի Դավիթ» : Վեպի մեկ այլ համահավաք բնագիր է կազմել Տ.Չիթունին Փարիզում «Սասունական» վերնագրով:

Էպոսի գաղափարը հայ ժողովրդի հերոսական պայքարն է թշնամիների դեմ: «Սասնա ծռերը» բաղկացած է 4 ճյուղից, որոնցից յուրաքանչյուրը կոչվում է հերոսների անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Միհր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Միհր»:«Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հայ դյուցազունների անպարտելիությունն է: Իր սիրելի հերոսներին ժողովուրդն անվանել է «ծռեր», այսինքն՝ խենթ քաջեր: Նրանք աչքի են ընկնում գեղեցկությամբ, դյուցազնական ուժով ու զորությամբ, որը ստանում են մայր բնությունից, հայրենի հողից ու ջրից: Սասնա հերոսները որքան էլ ատում են բռնությունն ու ստրկությունը, կռվում թշնամիների դեմ, բայց ամենևին դաժան ու անհոգի չեն:Նրանք կռվում են միայն իրենց հայրենի հողը պաշտպանելու համար,երբեք իրենք չեն հարձակվում ուրիշի վրա:Էպոսը իր մեջ կրում է խաղաղության,ընտանիքի,մեծին հարգելու գաղափարը,որի համար 1964թ. մեր էպոսը վիպերգերի միջազգային մրցույթում ճանաչվել է լավագույնը: Էպոսի ամբողջական մշակված տարբերակը 1939թ. թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն, չինարեն, անգլերեն, գերմաներեն, վրացերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով:

1.3.«Սասունցի Դավիթ» էպոսը որպես հայի ազգային ինքնության արտացոլման աղբյուր

Ժողովրդական վեպը, դյուցազնավեպը կամ էպոսը մարմնավորում է տվյալ ժողովրդին առանձնահատուկ, նրան բնորոշ հատկությունները: ժողովրդի ապրումները,

նրա ձգտումներն արտահայտող նման ստեղծագործությունները մշակվում են երկար ժամանակ, դարերի ընթացքում, բայց վերջնական ձևավորում են ստանում ժողովրդի ինքության, ինքնագիտակցության բարձրացման որոշակի աստիճանում։

Դյուցազնավեպը սկզբնավորվել է Սասունում, բայց աստիճանաբար տարածվել է ամբողջ ժողովրդի մեջ և դարձել համազգային։ Այն իր մեջ ներառել է անցյալի առասպելական պատումները՝ սկսած Հայկի և Բելի պայքարից, այսինքն՝ հայ ժողովրդի առաջացման, բռնակալ իշխանությունների դեմ պայքարի ժամանակաշրջանից։ Թումանյանը էպոսը դիտում է որպես հնագույն ժամանակներից՝ Հայկ Նահապետից սկսած, ժողովրդի մտածումների, ձգտումների, երազանքների արտահայտություն։ Երկար դարեր բանահյուսությունն է եղել ժողովրդական մտքի միակ ասպարեզը։ Հազարամյակների ընթացքում ժողովուրդն է սերնդից սերունդ մշակել Դավթի կերպարը, նրա մեջ դրել իր լավագույն զգացումները, ձգտումները, իղձերն ու նպատակները։ Հետևաբար, եզրակացնում է Մեծ Լոռեցին, միևնույն ժողովուրդը երկու էպոս ունենալ չի կարող ։

Դավթի կերպարում մարմնավորվել են իրեն ծնող ժողովրդի ազգային հատկանիշները։ «Սասունցի Դավիթ»–ը հայ ժողովրդի ողջ պատմության ընդհանրացումն է։ Հայ ժողովուրդը անկախ ու ազատ ապրելու անպարտելի ուժը, մարդկային իր խոհերն ու ձգտումները մարմնավորել է ժողովրդական էպոսում, մասնավորապես Դավիթի կերպարի մեջ։ Հարկ է նշել, որ բոլոր ժողովուրդների էպոսներն իրար հետ ունեն շատ ընդհանուր գծեր։ Նրանցում տվյալ ժողովրդի շահերն արտահայտող հերոսները չար ուժերի դեմ պայքարում մշտապես հաղթանակ են տանում։ Հերոսները ծնունդ են առնում բնության երևույթներից՝ աղբյուրի ջրից, խնձորից, արևի լույսից և այլն։ Դյուցազուն մանուկներն աճում են ոչ թե տարիների կամ ամիսների, այլ ժամերի ընթացքում։ Նրանք անասելի մեծ ուժի տեր են և սխրանքներ են կատարում դեռ պատանեկության շրջանում։ Մեծ ուշադրություն է դարձվում դյուցազունների զենքին ու նժույգին։ Նժույգը հանդես է գալիս որպես իր տիրոջ կախարդական օգնականը։ Անհրաժեշտության պարագայում քնից արթնացնում է տիրոջը, զգուշացնում վերահաս վտանգի մասին։ Էպոսները ավարտվում են արդարության, բարության հաղթանակով ։

Ընդհանուր այս երևույթները հատուկ են նաև հայկական էպոսին։ Սանասարը և Բաղդասարը ծնվում են աղբյուրի զուլալ ջրից։ Դավիթն ուժ ու կորով է ստանում այդ նույն աղբյուրի ջրից։ Հայկական էպոսում առաջին հերթին արժևորվում է բարիքներ ստեղծող

արդար աշխատանքը։ Աշխատանքը՝ որպես կյանքի կենսունակության աղբյուր, առկա է դյուցազնավեպի բոլոր ճյուղերում. Սանասարն ու Բաղդասարը կառուցում են Սասնա բերդը, Դավիթը վերականգնում է հոր կառուցած Մարութա վանքը, Փոքր Միհրը զբաղվում է կամրջաշինությամբ։ Դավթին տեսնում ենք գութանի ու գութանավորների հետ։ Հյուրասիրվելով գութանավորների մոտ՝ Դավիթը սպառում է նրանց մեկ շաբաթվա սննդի պաշարը, որի պատճառով ստեղծվում է դժվարին կացություն։ Դավիթը նրանց ազատում է հոգսից՝ վեց օրվա վարը մի քանի ժամում կատարելով[1]։

Մարդու գոյության կարևոր նախապայմաններից մեկը հացն է, որը ստացվում է երկրագործի ծանր աշխատանքի միջոցով։ Աշխատանքը, գութանը ներկայանում է իբրև գոյության հիմք, իբրև առատության աղբյուր, այն ընդհանուր հարգանքի ու մեծարման է արժանանում։ Պատահական չէ, որ հնուց եկող ավանդությամբ հայ ժողովրդական բանահյուսության մեջ աշխատանքին ձոնված երգերի մեծ մասը կազմել են գութանին, վար ու ցանքին, բերքահավաքին նվիրված երգերը։ Դյուցազնավեպում ժողովուրդը կյանքի իմաստը տեսնում է խաղաղ աշխատանքի մեջ։ Ատելությամբ է վերաբերվում թալանով, կողոպուտով ապրողների նկատմամբ։ Արդար աշխատանքով, սեփական քրտինքով հաց վաստակելը ներկայանում է որպես սկզբունք, որպես միակ ընդունելի միջոց։

Հայկական էպոսում լայն տեղ է տրվում հնից ժառանգած և հայ ժողովրդի համար ավանդություն դարձած կյանքի երևույթներին, դարերի ընթացքում ձևավորված, նրան հարազատ դարձած, նրա կենցաղի մեջ մտած ազգային սովորություն դարձած մարդկային հատկանիշներին։ Դրանցից են ընտանիքի մեծի նկատմամբ խոր հարգանք ունենալը, նրան ենթարկվելը, անչափահաս ժառանգին հորեղբոր, մորեղբոր խնամելը, ապա նրա հովանավոր, խորհրդատու դառնալը, փորձով իմաստնացած մեծահասակ մարդկանց խորհուրդները լսելը։ Դավիթը քանիցս ականջալուր է լինում կորեկի արտի տեր պառավ հայ կնոջ խորհուրդներին և մշտապես հաջողության է հասնում։ Երբ նա անխնա կոտորում էր Մըսրա Մելիքի զորքին, յոթ տղաների հետ կռվի դաշտ բերված գլխաբաց արաբ ծերունին խնդրանքով դիմում է Դավթին և դադարեցնել է տալիս կոտորածը։

«Սասունցի Դավիթ» էպոսի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրա հերոսները թշնամու դեմ մենակ են հանդես գալիս։ Մյուս ժողովուրդների էպոսների հերոսները, որպես կանոն, զորքով են կռվի մեջ մտնում։ Հայկական դյուցազնավեպում

[1]**Սասունցի Դավիթ, 1939: Օրբելի Հ., 1956 էջ. 7:**

դավաճանություն չենք տեսնում։[2] Պատմական անցյալում Հայաստանում առանձին նախարարների, իշխանների կողմից նման դեպքեր եղել են, բայց քանի որ դավաճանությունն ընդհանուր առմամբ անհարիր է հայ ժողովրդի ոգուն, էպոսում տեղ չի գտել։ Տարբեր ժողովուրդների էպոսներում կինը հաճախ դավաճանի կամ դատապարտելի արարքների հեղինակ է հանդես գալիս։ «Սասունցի Դավիթ» էպոսում, ընդհակառակն, կինը դրսևորում է անձնազոհ մարդասիրություն։ Թագավորի դուստր Ծովինարը, տեսնելով, որ խալիֆի հարսնացու դառնալուն համաձայնություն չտալու դեպքում երկիրն ավերվելու է, ժողովուրդը՝ կոտորվելու, գնում է ինքնազոհության։ Հայ կինը էպոսի մյուս հերոսների նման ու նրանց կողքին հայրենասիրության, ժողովրդավարության վառ օրինակ է տալիս։

«Սասունցի Դավիթ» էպոսը ամբողջովին ժողովրդական է ոչ միայն ժողովրդի կենցաղը, վարքն ու բարքերն արտահայտելով, ոչ միայն նրա համար, որ կենսունակ ապրում է ժողովրդի բանավոր պատմության մեջ, այլև, ինչպես ճիշտ նկատել է Հ. Օրբելին, ժողովրդական է, քանի որ նրա հերոսների աշխարհայեցողությունը անխզելիորեն կապված է բուն ժողովրդի հետ։ «Այս էպոսը ժողովրդական է,– գրում է Հ. Օրբելին,– ժողովրդական է ոչ միայն նրա համար, որ ապրում է ժողովրդական զանգվածների մեջ և պատմվում նրանց բերանով, ոչ միայն նրա համար, որ մինչև վերջին ժամանակներս, մինչև մեր օրերը, ապրում է ժողովրդի բանավոր պատմության մեջ, ոչ միայն նրա համար, որ նրա լեզուն բոլոր վարիանտներում ժողովրդական լեզու է, հին կամ նոր հայերեն գրական լեզվի կազմությանն ու բառապաշարին օտար, այլև ժողովրդական է նախ և առաջ նրա համար, որ նրա հերոսների ամբողջ աշխարհայեցողությունն անխզելիորեն կապված է բուն ժողովրդական ներքնախավերի հետ»[3]...

Հայկական էպոսի հերոսները դուրս են եկել ժողովրդի միջից և մշտապես կապված են մնացել նրա հետ։ Նրանց բարքերը, սովորությունները հասարակ մարդկանց, ժողովրդի կենցաղն է։ ժողովրդի հետ սերտորեն առնչված, պարզ ու միամիտ, բայց մշտապես արդարամիտ լինելով՝ միաժամանակ դրսևորում են ազնվականին հատուկ արժանապատիվ կեցվածք։ Դավիթը համաձայնվում է, որ հարվածելու իրավունքից առաջինը օգտվի Մսրա Մելիքը, երեք զարկից հետո, երբ հերթը հասնում է Դավթին,

[2] Ղանալանյան Ա. «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, , Երևան, 1939, 383 էջ։

[3] Օրբելի - 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956 17էջ։

կրծքով իրեն սնած կնոջ խնդրանքով առաջին զարկը նվիրում է նրան։ Երկրորդ զարկը՝ Մելիքի քրոջը, որի ծնկներին էր մեծացել ինքը։ Օգտվում է միայն վերջին զարկի իրավունքից։ Հայ հերոսները արդարամիտ ու ազնիվ են իրենց բոլոր արարքներում։ Դավիթը Մսրա Մելիքի զորքի վրա հանկարծակի չի հարձակվում, զգուշացնում է, որ նրանք պատրաստվեն կռվի[4]։

Ժողովրդական վիպերգությունները, ինչպես նշում է Հ. Թումանյանը, որքան էլ ազգային լինեն, համամարդկային շատ գծեր ունեն։ Հայկական էպոսում բավականաչափ ցայտուն է արտահայտվել այդ հանգամանքը։ Ազատության գաղափարը էպոսում սահման չի ճանաչում, չի պարփակվում իր ժողովրդի շրջանակներով, այլ հնչում է որպես համընդհանուր գաղափար, դառնում սրբություն։ Ահա դրա մեկ օրինակը. Դավիթը քանդում է հոր որսատեղի պարիսպները և ազատություն է տալիս անգամ որսի կենդանիներին։

Ժողովուրդների համերաշխության գաղափարը կարմիր թելի նման անցնում է ամբողջ դյուցազներգության միջով։ Մըսրա Մելիքի սպանությունից հետո Դավիթը նրա զորքին որևէ պահանջ չի առաջադրում, ոչ էլ հալածում է, այլ խաղաղ կյանքով ապրելու հորդոր է անում։ Ահա սա է հայոց դյուցազնավեպի, ասել է թե հայ ժողովրդի իդեալը։

Էպոսում չկա կրոնական անհանդուրժողականություն, կռիվը գնում է այլ դավանանք ունեցող օտարերկրացու դեմ։ Թշնամու դեմ պայքարը ոչ թե հանուն դավանանքի, այլ նրա հարկային ծանր բեռը թոթափելու, ազատ ապրելու համար, կրոնական այլ դավանանքի որևէ նշանակություն չի տրվում։

«Սասունցի Դավիթ» էպոսը օտար բռնակալության դեմ հայ ժողովրդի դարավոր պայքարը ներկայացնող էպիկական հուշարձան է, աշխարհի էպիկական ստեղծագործությունների շարքում լավագույն հուշարձաններից է։ Լայն ընդգրկումով, կառուցվածքի ամբողջականությամբ, ժողովրդավարությամբ, ազգային ոգին համակողմանիորեն արտահայտելու հատկանիշներով առանձնանում է շատ ժողովուրդների դյուցազնավեպերից։ Հայկական էպոսի նշված հատկանիշները համամարդկային բնույթ ունեն, որոնք ձևավորվել, մշակվել են դարերի ընթացքում և բնորոշ են հայ ժողովրդին։ Պատմության հոլովույթում օտարերկրյա հզոր ուժերը հաճախ ավերել են մեր երկիրը, ոչնչացրել պատմական հուշարձանները, հոգևոր և աշխարհիկ շինությունները, բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի՝ ազատության ձգտող կենդանի ոգին։

[4] Տե՛ս Սասունցի Դավիթ, 1939։ Օրբելի Հ., 1956 24 էջ։

Սա է «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի հիմնական գաղափարը, նրա էությունը[5]։

ԳԼՈՒԽ 2

2.1.ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒ ԹՑՈՒՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 1-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

«Սասունցի Դավիթ» էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին, ու այսօր էլ իր գաղափարներով խիստ

[5] Օրբելի - 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956։

այժմեական է և հուզիչ։

Ժամանակակից տարրական դպրոցում առանձնահատուկ տեղ ունի հայկական ժողովրդական էպոսի դասավանդումը, որն սկսվում է Վ.Սարգսյանի և Ա. Տեր-Գրիգորյանի ու Ա. Քյուրքչյանի «Այբբենարանի» ուսուցման այբբենական շրջանից։ Վ.Սարգսյանի «Այբբենարանում» աշակերտները, սովորելով *Ն* և *Ս* տառերը, պետք կարողանան վերականգնել *Սանասար* անվանման բաց թողնված *ն* և *ր* տառերը։[6]

Իսկ Ա.Տեր-Գրիգորյանի և Ա.Քյուրքչյանի «Այբբենարանում» *Ն* հնչյուն– տառի ուսուցման շրջանակում վանկախաղի միջոցով ծանոթանում են *Սանասար,* ապա *Սասնա սար* հատուկ անուններին, բառախաղի միջոցով՝ *Սուսան– Սասուն,* ծանոթանում են Սասուն տեղանվանը և ապա ուսումնասիրում մի հետաքրքրաշարժ շուտասելուկ՝ *Սանասա՛ր, ասա՛ Սասնա սար։*

Վ.Սարգսյանի «Մայրենի 1»–ում էպոսը դասավանդվում է «Մեր հայրենիքը Հայաստանն է» թեմայի շրջանակներում, որտեղ երեխաները նյութի մասին պատկերացում կազմում են պատկերների միջոցով, որոնք մեկնաբանված են մեկ նախադասությամբ։ Ներկայացված է Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի մենամարտը։ Գործող անձինք մի քանիսն են, և որպեսզի երեխաներն ավելի պատկերավոր հասկանան, անհրաժեշտ է հասկանալ յուրաքանչյուրի տրամադրությունը։ Նյութն ունի դաստիարակչական մեծ արժեք։ Ուսումնասիրելուց հետո կարելի է համեմատականներ անցկացնել Դավթի և Մելիքի միջև վերլուծության միջոցով։ Եվ կռիվն ավարտվում է Դավթի հաղթանակով, որը դաստիարակում է, որ կռվում միշտ բարին է հաղթում։

Ա.Տեր-Գրիգորյանի և Ա.Քյուրքչյանի «Մայրենի 2» դասագրքում էպոսը դասավանդվում է «Իմ անուշիկ Հայաստան» թեմայի շրջանակներում։ Առաջին հատվածում պատկերվում է, թե ինչպիսին էր մեր ազգային հերոսը աշակերտների տարիքում։ Սկսվում է Դավթի կյանքը Սասունում։

Հետագայում Վ.Սարգսյանի «Մայրենի 2» դասագրքում էպոսը դասավանդվում է «Հայաստանը մեր հայրենիքն է» թեմայի շրջանակներում։ Աշակերտներին հանձնարարվում է կարդալ «Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ» վերնագրով հատվածը, որտեղ Մսրա Մելիքը ներկայացվում է որպես սարի չափ մի հսկա, որն ուներ անհամար զորք, որի բազմությունը պատկերելու համար հեղինակները էպոսից ներկայացնում են գետի ջրերը

[6] Տեր-Գրիգորյան Լ.Ա., Քյուրքչյան Ա.Ն. «Այբբենարան», Երևան, 2020, 124 էջ։

խմելով ցամաքեցնելը:

Վ.Սարգսյանի «Մայրենի 3» դասագրքում «Սասունցի Դավիթ» էպոսից հատված ընթերցում են «Հայրենիք, ես մի զարկն եմ քո բազկի» թեմայի շրջանակներում: 3-րդ դասարանի «Մայրենիի» դասագրքում մեջբերված առաջին հատվածում ներկայացվում է գառնարած Դավիթը, որ քաղաք էր բերել անտառի բոլոր կենդանիներին:[7] Երկրորդ հատվածում աշակերտները տեղեկանում են ժողովրդի վերաբերմունքին, նրանք Դավթին խենթ են անվանում և խնդրում Ջենով Օհանին մի ուրիշ գործի դնել Դավթին: Դ.Դյուրջինյանի և Ն.Հեքեքյանի «Մայրենի 3» դասագրքում «Սասունցի Դավիթ» էպոսից հատված ընթերցում են «Մեր հայրենիքի հերոս պաշտպանները» թեմայի շրջանակներում: Այստեղ ընդգրկված է Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավթի» այն հատվածը, թե ինչպես է Դավիթը իր Թուր Կեծակիով մեջտեղից երկու կես անում Մելիքին: Մսրա բանակը, այս ամենը տեսնելով, շատ է վախենում, որ Դավիթը իրենց էլ Մելիքի ճակատագրին կարժանացնի, բայց ստացվում է անսպասելին:

3-րդ 4-րդ դասարաններում առաջարկվում է շարունակել էպոսի ընթերցանությունը նաև ինքնուրույն ընթերցանության ժամերին՝ ձևավորելով ընթերցողական ինքնուրույնություն, որն ուսուցման առաջին աստիճանի վերջնական նպատակն է: Հայ ժողովրդական էպոսում հավաքական ժողովուրդն իր սիրելի հերոսին՝ Դավթին, դնում է ամենատարբեր կենսական իրավիճակներում և կերտում, հիրավի, անմոռաց կերպար:

Շարունակելով մեր հետազոտությունները բացահայտեցինք, որ հաջորդ դասարաններում՝ 5-րդ, 6-րդ դասարանի մայրենիի և 7-րդ, 8-րդ դասարանի գրականության դասագրքերում ընդհանրապես չեն անդրադարձել էպոսի թեմային, ցանկալի կլիներ, որ անդրադառնային. միջին դպրոցականների դաստիարակության հարցում դա մեծ ազդեցություն կունենար:

9-րդ դասարանի գրականության դասագրքում առաջարկվում է շարունակել էպոսի ընթերցանությունը՝ մի ամբողջ թեմատիկ խմբով՝ <<Սասունցի Դավիթ>>: Այս թեմատիկ խմբի ուսումնասիրումը երեխաներին հաղորդակից կդարձնի էպոսում հայ ազգային և նյութական մշակութային դարավոր արժեքների ճանաչմանը:

[7] Սարգսյան Վ. Ա., Խաչատրյան Հ. ն և այլք, «Մայրենի 3», Երևան, 2020, 81 էջ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Թեման – Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Դասի տիպը – Ամրապնդման դաս՝ ԽԻԿ համակարգով

Տևողությունը– 1 դասաժամ

Դասի նպատակները

- պատկերացում տալ հայրենասիրության մասին,
- ընդգծել հայկական ժողովրդական էպոսի դերը,
- ընդհանուր պատկերացում տալ հայկական էպոսի մասին,
- վերլուծել էպոսի ճյուղերի բովանդակությունն ու գաղափարները:

Դասի խնդիրները

- քննարկել էպոսի ժանրային առանձնահատկությունները, ստեղծման նախադրյալները,
- վերլուծել կերպարները,
- էպոսից առանձնացնել հայրենասիրությանն ու ազգայինին առնչվող դրվագները,
- ներկայացնել էպոսում արտացոլված ժողովրդական ավանդույթները,
- վերլուծել էպոսի երևակայական կողմը,
- բացահայտել հիմնական գաղափարը:

Մեթոդները

Փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների ու հնարների (մտագրոհ, Վենի դիագրամ, Տ-աձև աղյուսակը շարադրություն…), համագործակցային տեխնոլոգիայի կիրառում:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Կազմակերպման փուլ (2 - 3 րոպե)

Դասի կառավարում, անհրաժեշտ պարագաների պատրաստում, նախապատրաստական զրույց, կազմակերպչական մաս:

Դասը սկսում ենք ԽԻԿ համակարգով:

1. Խթանման փուլ (4 – 6 րոպե)

ա. Նշում ենք օրվա դասի թեման ու նպատակը: Մտագրոհի միջոցով համեմատում ենք էպոսի ու այլ ժանրի ստեղծագործությունների առանձնահատկությունները: Համեմատելով ընդգծվում է, որ էպոսը բանահյուսական ժանր է: Էպոսը ժողովրդական ստեղծագործություն է՝ հին հերոսների սխրանքների մասին: էպոսում ամեն մի ժողովուրդ

մարմնավորում է ազատության ու անկախության համար մղած իր պայքարը: Էպոսի հեղինակը հայ ժողովուրդն է: Այն առաջինը գրի է առել Գարեգին Սրվանձտյանցը, որի ողջ ստեղծագործությունը նպատակ ուներ ամեն հայի, հատկապես նոր բարձրացող սերնդի գիտակցության մեջ ամրապնդել ազգային ինքնագիտակցություն ու հայրենասիրություն: Իր սրբազան նպատակը նա շարադրել է «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքույկի ծրագրողի խոսքի մեջ: Իր հիանալի գրքույկը Գ. Սրվանձտյանցը համարում է յուրօրինակ նվեր ողջ հայ ժողովրդին. նրանում հավաքված նյութերը ներկայացնում են հայի ոգին, հողը, ջուրը, այն ամենը, ինչը հային պահում է հայ: Էպոսի բնագիրը տպագրելու հանգամանքները հայտնի են դառնում հենց բանահավաքի գրածից: Տեղեկանում ենք, որ բանագետը երեք տարի հետամուտ է եղել հայ հերոսական էպոսի բանավոր շարադրանքը գտնելուն, և ի վերջո նրա ջանքերը պսակվել են հաջողությամբ. Մշո դաշտի Առնիստ գյուղի երեսփոխան Կրպոն արժանավոր Օհան վարդապետի միջոցով ներկայացրել է բանագետին:

Աշակերտները 4-րդ դասարանից հիշում են էպոսի հերոս Սասունցի Դավթի սխրանքները: Վերլուծելով ազգային սիրված հերոսի բնավորության հիմնական գծերը՝ քաջություն, հայրենասիրություն, նվիրում իր ժողովրդին, հոգատարություն դեպի աշխատավոր մարդը, վեհանձնություն և մեծահոգություն՝ աշակերտները սահմանում են հայրենասիրրությունը և ներկայացնում հայրենիքի դերն իրենց կյանքում:

1. Իմաստի ընկալման փուլ (25 րոպե)

Կիրառելով «Շրջագայություն գրքի բաժիններով» կառուցողական ռազմավարությունը՝ աշակերտներին ներկայացնում ենք էպոսի չորս ճյուղերը՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով, այնուհետև՝ անդրադառնում էպոսում արտացոլված հիմնական, մասնավորապես հայրենասիրության գաղափարներին:

Նախապես աշակերտները կարդացել են էպոսը, կարողանում են ըստ ճյուղերի համապատասխան վերլուծություններ կատարել: Դասարանը բաժանելով չորս խմբի՝ իրականացնում ենք համագործակցային հետազոտական աշխատանք:

Թեմայի ամրապնդման համար յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է վերլուծել կերպարները, նրանց հայրենասիրական գործունեությունը: Էպոսի դյուցազունները խալիֆի զավակները չեն, նրանք ջրածին են, ավելին՝ ջուրը Հայաստանինն է: Սա շատ կարևոր դրվագ է: Ընդհանրապես հայրենիքը, հայրենի եզերքը խորհրդանշում են հողը, ջուրը, մարդու հարազատները:

Առաջադրանքը կատարելուց հետո խմբերը լրացնում են հարցման հետազոտական աղյուսակը:

«Սասնա ծռեր» էպոսը	
1. Նկարագրել հայրենասեր Ծովինարի կերպարը:	
2. Նկարագրել Մեծ Մհերի հայրենասիրական գործերը,	
3. Նկարագրել Սասունցի Դավթի ն՝ որպես հայրենասերի:	
4. Նկարագրել Փոքր Մհերի հայրենասիրական գործերը:	

Աշակերտները էպոսից պետք է առանձնացնեն նաև համապատասխան հատվածներ, որոնք բնութագրում են այս կամ այն կերպարի հայրենասիրական գործունեությունը: Այսպիսի վերլուծության արդյունքը պետք է դառնա հեղինակի դիրքորոշման ըմբռնումն ու ընթերցողի վերաբերմունքի ձևավորումը ընթերցածի բովանդակության նկատմամբ: Հիմք ընդունելով բովանդակային բաղադրիչները՝ անհրաժեշտ է նախ աշակերտների ուշադրությունը հրավիրել այն հատվածներին, որոնք ազգային գաղափարախոսության տարրեր են բովանդակում, նաև որոշակի բառերի ու արտահայտությունների, քանի որ բառերի միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել հերոսի հոգեվիճակը, նրա արարքների դրդապատճառները, հերոսի ինչպիսին լինելը, հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ և այլն:

Կերպարների հայրենասիրական արարքների վերլուծության ժամանակ կիրառում ենք Վենի դիագրամն ու T-աձև աղյուսակը, որոնք հնարավորություն են տալիս հակադրության հիմքով առանձնացնելու հայրենասեր կերպարներին:

Նշել ..... կերպարը բնութագրող տողեր	
1. Ծովինարի գեղեցկությունը տեսնելով («Աղջիկ էնպես խորոտ, էնպես խորոտ»՝ որոշում են խալիֆին համոզել հարկի	Ծովինար խանում ասաց. -Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ, Զամեն տի սպանի իմ պատճառով, Աղեկն էն է, ե՛ս էրթամ,

	փոխարեն կնության առնել Ծովինարին: Խալիֆը պահանջում է Ծովինարին՝ զգուշացնելով, որ մերժման դեպքում կավերի Հայաստանը: Հարցի լուծումը գտնում է հայրենասեր Ծովինարը՝ կամովին իրեն զոհելով հանուն երկրի ու ազգականների:	Ուրիշ մարդու թող բան չըլնի: Ե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն. Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսվիմ, Քանց մեր Հայաստան էրկիր ավերի, Էն հազար-հազար հոգիք կորուսանին: Դարձավ ասաց. -Հայրի՛կ, ինձ տուր էնոր[8]:
2.	Մեծ Մհերի կերպարը ներկայացնելու համար խիստ բնութագրական է առյուծին պատռելու տեսարանը: Նախ. բացահայտվում է Մհերի հոգատարությունն ու պատասխանատվությունը սեփական ժողովրդի նկատմամբ (չէ՞ որ երկրին սպառնում էր սովը) և երկրորդ՝ Մեծ Մհերը՝ որպես խիզախ առաջնորդ, ինքն է լուծում իր երկիրը առյուծից ազատելու խնդիրը:	Մհերի հետ գնացած մարդիկ հեռու կանգնան. Մհեր մենակ գնաց: Գնաց, ինք ու առյուծ առան իրար: Մհեր կանչեց.- Հացն ու գինին, տեր կենդանին: Կանչեց, մի ձեռ թալեց էդ առյուծի վերի ծնոտ, Մյուս ձեռ թալեց ներքի՛ ծնոտ, Ճղեց էդ առյուծ մեջտեղեն, Արեց էնոր էրկու կտոր: Մեկ դրեց ճամփու էս դին, մեկէլ՝ էն դին (էջ 106):
3.	Էպոսում փառաբանվում է այն անհատը, որը հանուն հայրենիքի պատրաստ էր զոհել իր կյանքը, և ի հավելումն այդ գաղափարի՝ սրբազան է համարվում որևէ ժողովրդի՝ հանուն իր ազգային ազատության ու անկախության նվաճողների դեմ ուղղված պատերազմը: Դավիթն անսահման սիրում է իր հայրենի եզերքը, հարազատներին, հասարակ ժողովրդին և շարունակ օգնում է նրանց: Նա բարի է ու աստվածավախ: Տանել չի կարողանում ոչ մի բռնություն: Նույնիսկ քանդում է Ծովասարի պարիսպները և ազատ արձակում վայրի գազաններին:	Էն գիշեր կը քնեն, Դավիթ կը տեսնա՝ Մարութա բարձր Աստվածածին կը գա էրազ, կ’ասի. «Քո՛ թուր քո մեջքեն քաշի, «Իմ հիմ քո թրի վերա ձգի, «Օրե՛ մի կը շինես, կը թամամցես, «Պատարագ մեջ վանքիս կը մատուցես, «Որ ես վեր իմ հիման կանգնեմ»: Ուստեք տիլ կը զարկեն էդ քարերու բոլոր: Դավիթ զարթնավ, տեսավ՝ Մարութա բարձր Աստվածածին չըկա: Քարն իր տեղն է գնացե, Հողն իր տեղն է գնացե, Ավազ, կավ ու ինչ որ պատրաստություն կար՝ Ամենն իր տեղն է գնացե (էջ 195):
4.	Մհերին հետաքրքրելու է ոչ միայն իր երկրի, այլև հանուր մարդկության ճակատագիրը: Նա	Քանի աշխարք չար է, Հողն էլ ղալբցեր է, Մեջ աշխարքին ես չեմ մնա:

[8] «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 6:

դառնալու է մարդկության չար ուժերի դեմ կռվող խիզախ մարտիկը, սակայն պարտվելու և փակվելու է Ագռավաքարում՝ մարդկության երջանիկ օրերի հույսով: Ահա թե ինչ է բացատրում Մհերը Ագռավաքար մտած հովվին:	-Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի, Երբոր ցորեն էղավ քանց մասուր մի, Ու գարին էղավ քանց ընկուզ մի, Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն: Հովիվ որ դուրս կ'էլնի, Քար կը գա, կը հասնի իրարու (էջ 320):

Աշխատանքի ավարտից հետո խմբի անդամները ներկայացնում են իրենց աշխատանքը: Յուրաքանչյուր խմբին լսելուց հետո պետք է ամփոփել խմբային աշխատանքը՝ սահուն անցում կատարելով դասի հաջորդ քայլին՝ կանգ առնելով կանանց կերպարներին, որոնք խիստ տարաբնույթ են: Դրանց ընդհանրության մեջ առանձնացնում ենք Սասնա դյուցազունների կանանց, որոնք անսահման նվիրում ունեն իրենց ամուսիններին, Հայաստանին և ամուսնական հավատարմության մարմնավորումներ են: Այդպիսին է Սանասարի կինը՝ Դեղձուն Ծամը, որ Մեծ Մհերի մահից հետո փակվում է մութ սենյակում և մտնում խոր սգի մեջ. սուգը թողնում է միայն այն ժամանակ, երբ լսում է Քուռկիկ Ջալալու խրխինջը ու իմանում, որ Դավիթը Սասունը պաշտպանելու համար կռվելու է Մելիքի դեմ:

Հայրենասեր է նաև Արմաղանը. նա ներում է ամուսնուն՝ Սասնա տան ծուխը չկտրելու, ազգի հարատևության համար, առաջնորդ ունենալու մղումով, ինքնակամ ընդհատում է իր կյանքը, որի պայման-հետևանքով լույս աշխարհ է գալիս Դավիթը՝ Սասնա դյուցազունների մեջ ամենահմայիչն ու հզորը: Դավթի և Խանդութի սիրո պատմությունն իսկական սիրավեպ է. նրանում նրբորեն պատկերված են և՛ սիրո տվայտանք, և՛ սիրո վայելք, նաև կյանքում հազվադեպ հանդիպող հավերժական սեր: Համոզվելով, որ Դավիթն այլևս կենդանի չէ՝ Խանդութն իրեն ցած է նետում բերդի աշտարակից, ու նրա կրծքի զարկվելու տեղում բխում են երկու սառնորակ աղբյուրներ, որոնք խորհրդանշում են Դավթի և Խանդութի հավերժական սերը: Իր ամուսնուն անմնացորդ նվիրված է նաև Գոհարը, որը մահվանից առաջ թողնում է հետևյալ կտակը.

Մեջ գրուկ. «Քենե կը խնդրեմ՝

Ինչ ժամանակ դու գաս, ինձի տեսնես,

Ինձի տանես Սասուն,

Խանդութ խանումի կուշտ թաղես» (էջ 316):

Անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ հայ կանանց ժողովուրդը օժտել է դրական, իսկ այլազգի հերոսուհիներին՝ բացասական գծերով:

Կշռադատման փուլ - 4 – 6 րոպե

Խմբային տարբեր աշխատանքներից հետո աշակերտները արտահայտում են սեփական մտքերը հայկական ժողովրդական էպոսի վերաբերյալ:

Գնահատում և անդրադարձ (2 -3 րոպե):

Հարցերի միջոցով պարզում ենք դասի առավելությունները, ապա նշում բացթողումները: Գնահատումը կատարում ենք ըստ խմբային և անհատական ցուցանիշների: Հանձնարարում ենք գրել «Հայրենի հողի ուժը» վերնագրով շարադրություն:

«Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը հնարավորություն է տալիս դասի ժամանակ ուշադրության կենտրոնում պահել ողջ դասարանը, անցկացնել աշակերտակենտրոն դասեր: Դասախոսությունը և դասը պարտադիր է վարել հետաքրքիր, աշխույժ. այդ հնարավորությունն ընձեռում է գրական այս հուշարձանի հետաքրքրաշարժ բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Էպոսի ուսումնասիրումը բացառիկ նշանակություն ունի սովորողներին հոգևոր և բարոյական, ազգային և համամարդկային արժեքներով դաստիարակելու գործում:
2. Դպրոցը պետք է օգտագործի իր դաստիարակչական ներուժը՝ սովորողների մեջ սերմանելով բարություն, ազնվություն, ճշմարտասիրություն, հարգանք մարդու նկատմամբ և այլն:
3. Մեր իրականության մաս կազմող արժեքները՝ հոգևոր և նյութական, ամուր հենարաններ են, որոնք սովորողին, որ վաղվա քաղաքացին է, օգնելու են պայքարելու կյանքի հարուցած խոչընդոտների դեմ, դիմակայելու ստեղծված փորձություններին, հաղթահարելու անելանելի թվացող դժվարությունները:
4. Հայրենասիրական ստեղծագործությունների ուսումնասիրումը անհրաժեշտ գործընթաց է հայ դպրոցականի համար: Դրանց միջոցով նա ծանոթանում է ազգի մշակույթին, նրա անցած պատմական ուղուն, հայտնի հերոսներին: Ստեղծագործությունները ուղղակիորեն ազդում են սովորողների ներաշխարհի, հոգեբանության վրա, հարստացնում ու զարգացնում են նրանց արժեքային համակարգը, սովորեցնում սիրել հայրենիքը և անհրաժեշտության պահին պայքարել նրա ազատության և անկախության համար:
5. Ցանկալի արդյունքի հասնելու համար ստեղծագործությունների ուսումնասիրումը պետք է իրականացվի ճիշտ ու նպատակային ընտրված մեթոդների միջոցով:
6. Երեխաների հետ աշխատելիս ուսուցչի գերխնդիրն է յուրաքանչյուրին սովորեցնել ճանաչել ու սիրել հայրենիքը՝ ուժերի հնարավորության չափով նպաստ բերելով նրա բարգավաճմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղան Մ., Երկեր, հ. Ա, Ե., 1966, 420 էջ:
2. Գյուլամիրյան Ջ., Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների, շարադրությունների ձեռնարկ տարրական դպրոցի համար, Զանգակ հրատարակչություն, Երևան, 2019, 183 էջ:
3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 3», Երևան 2011, 160 էջ:
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 4», Երևան 2012, 200 էջ:
5. Գյուրջինյան Դ., «Մատենիկ», ընթերցանության գիրք, Երևան, 2012, 305 էջ:
6. Թիրաբյան Ն.Հ., «Կամար» Գրականութեան և և գեղարուեստի անկախ պարբերաթերթ, Պեյրութ, 2016, 84 էջ:
7. Զանփոլադյան Մ., - 1969, Թումանյանը և հայ ժողովրդական էպոսը, Երևան, 1969, 199 էջ:
8. Զանփոլադյան Մ., - Սասունցի Դավիթ, առաջաբանը՝ Ս. Հարությունյանի, Երևան 1981:
9. Ղանալանյան Ա. «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, , Երևան, 1939, 383 էջ:
10. Սասունցի Դավիթ, 1939: Օրբելի Հ., 1956:
11. Սարգսյան Վ. Ա. «Այբբենարան», Երևան, 2020, 157 էջ:
12., Սարգսյան Վ. Ա. «Մայրենի 1», Երևան, 2020, 65 էջ :
13. Սարգսյան Վ. Ա., ԽաչատրյաՀ. ն և այլք, «Մայրենի 2», Երևան, 2020, 81:
14. Սարգսյան Վ. Ա., ԽաչատրյաՀ. ն և այլք, «Մայրենի 3», Երևան, 2020, 81 էջ:
15. Սարգսյան Վ. Ա., Խաչատրյան Հ. և այլք, «Մայրենի 4», Երևան, 2019, 97 էջ:
16. Տեր-Գրիգորյան Լ.Ա., Քյուրքչյան Ա.Ն. «Այբբենարան», Երևան, 2020, 124 էջ:
17. Տեր-Գրիգորյան Ա.Ա., Քյուրքչյան Ա.Ն. «Մայրենի 1», Երևան, 2020, 64 էջ:
18. Տեր-Գրիգորյան Ա.Ա., Քյուրքչյան Ա.Ն. «Մայրենի 2», Երևան, 2020, 168 էջ :
19. Տեր-Գրիգորյան Լ, Գաբուջյան Ա. «Կրօնի դասագիրք 3»,Նոր Ջուղա, 2013-2015, 64 էջ:
20. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ, Մ.Խերանյանի «Սասնա տուն» դյուցազնավեպի համառոտ վերապատմում, Երևան, 2015, 135 էջ
21. –Բյուրք<յան Լ.Լ, Տեր-Գրիգորյան Ա., ճանաչեր երկիրը քո, Գիրք Գ, Ծաղկաքաղ հայկական հուշարձանների, Երևան, էդիթ Պրինտ, 2012, 120 էջ:
22Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Ա., ճանաչեր երկիրը քո, Գիրք Ե: